Հանրապետական
Մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Բաղանիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում

Վերապատրաստող, մենթոր՝ Աննա Անտոնյան

Ուսուցիչ՝ Շուշան Աբովյան

2023

Բովանդակություն

Ներածություն _____էջ 3-6

Գլուխ 1 _____էջ 7-10

Գլուխ 2 _____էջ11-14

Գլուխ 3 _____էջ 14-19

Իմ փորձառությունը _____ էջ 20-23

Եզրակացություն_____էջ 23-24

Գրականության ցանկ_____ էջ 25

Ներածություն

Միայնակ մենք քիչ բան
կարող ենք անել, միասին
մենք կարող ենք սարեր
տեղափոխել:

Հելեն Քելլեր

Մատաղ սերնդի կրթության և դաստիարակության մեջ միշտ առաջնային է եղել դպրոց-ընտանիք կապի նշանակությունը:
Ուսուցչակենտրոն կրթության պայմաններում կրթադաստիարակչական գործընթացի սուբյեկտ էր համարվում առավելապես ուսուցիչը՝ մասնագիտական գործունեության մեջ օբյեկտիվացնելով սովորողի դերը՝ որպես ուսուցչի կողմից նրա իսկ ընտրությամբ աշակերտին փոխանցվող նյութի, գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման «մեխանիզ»: Սակայն ժամանակակից ուսումնադաստիարակչական նպատակների վերանայման արդյունքում կրթադաստիարակչական գործընթացում հավասարապես սուբյեկտ են հանդիսանում թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտը և թե ծնողը՝ որպես դպրոցում երեխայի խնամակալ կամ ներկայացուցիչ:Ուստի երեխայի առանձնահատկությունների ու հետաքրքրությունների հետ միասին հաշվի է առնվում նաև ծնողի կողմից ներկայացվող տեղեկատվությունն ու պահանջը պրոցեսի արդյունավետության նկատմամբ:Այս տեսանկյունից, բնականորեն, աճում է նաև ծնողի դերն ու նշանակությունը դպրոցի ուսումնադաստիարակչական, ինչպես նաև դպրոցական ու արտադպրոցական միջոցառումների մասնակցության գործում: Հատկանշական է նաև, որ ներկայիս դպրոցական պայմաններում ծնողը երեխայի համար հանդիսանում է որպես միջոցառումների ֆինանսական դոնոր: Այս հանգամանքը ևս իր ազդեցությունն է ունենում ընտանիք-ծնող փոխհարաբերությունների վրա: Ծնող-երեխա փոխհարաբերությունները կազմավորվում են ընտանիքում, որտեղ նաև տեղի է ունենում երեխայի ֆիզիկական, հուզական և ինտելեկտուալ զարգացումը: Ընտանիքը այն սոցիալական միջավայրն է,որտեղ բավարարվում են երեխայի կարևորագույն պահանջմունքները,այդ թվում՝ սիրո և կապվածության,ապահովության և պաշտպանվածության պահանջմունքները:Անշուշտ,կարևոր է ընտանիքում երեխայի դերը, ծնողների վերաբերմունքը նրա հանդեպ,քանզի երեխայի վարքը պայմանավորված է նրանով,թե ծնողներն ինչպիսի զգացումներ,ինչ սպասումներ ունեն նրանից, ինչպես են գնահատում նրան:
Առկա է նաև ուսուցիչ-ծնող կապի ազդեցությունը երեխայի համակողմանի զարգացման վրա: Ինչպես գիտենք,սովորողների տարիքային առանձնահատկություններից բացի մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային,ֆիզիկական,տնտեսական, քաղաքացիական,իրավական ու էկոլոգիական դաստիարակության համաչափ ու արդյունավետ ապահովման

գործում առաջնային է նաև երեխայի զարգացման անհատական,ընտանեկան,սոցիալական,միջավայրի գործոնների վերհանումը և ուսումնասիրությունը:Այս հարցում ուսուցիչը իր դիտումներից ու հետազոտություններից բացի կարող է և պետք է հիմնվի նաև ծնողի հետ անհատական հաղորդակցության, նրանից՝ որպես անմիջական աղբյուրից ստացվող տեղեկատվության վրա: ՈՒսուցիչ-ծնող և դպրոց-ընտանիք համագործակցության մեջ հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ դպրոցական համակարգի ներկայիս տարանջատումը կրտսեր և ավագ դպրոցների և այլ բարեփոխումներ ծառայում են հասարակական ընդլայնվող պատվերի ապահովմանը, այն է՝ դպրոցում ձեռք բերված գիտելիքներով շարունակել միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթությունը: Սա ենթադրում է, որ դպրոցը այժմ առավել, քան նախկինում պատասխանատու է սերնդի հասարակական ինտեգրման ամուր հիմքերի կառուցման համար: ՈՒստի մեծ է նաև դպրոցի ու ընտանիքի համագործակցության դերը երեխաների հասարակական-քաղաքացիական կյանքին նախապատրաստման մեջ:

Այս և մի շարք այլ խնդիրներ մեկ անգամ ևս շեշտադրում են դպրոց-ընտանիք կապի անհրաժեշտությունն ու հույժ կարևորությունը:Նման կապերի և առնչությունների պահպանման և արդյունավետության բարձրացման համար բոլոր ժամանակներում էլ ամենամեծ նշանակությունը տրվել է կողմերի անձնային և մասնագիտական որակների, հաղորդակցման կուլտուրայի, համագործակցային կարողությունների զարգացմանը: Ինչպես նշում է Լ. Ն. Տոլստոյը՝ «Դաստիարակությունը բարդ ու դժվարին աշխատանք է մինչև այն ժամանակ,երբ մենք դեռ մեզ չդաստիարակած՝ ուզում ենք դաստիարակել երեխաներին»: Ուստի սերունդների դաստիարակության վրա մեծ ազդեցություն է ունենում մանկավարժական և դաստիարակչական ներգործության անձնական օրինակը:

Հատկանշական է, որ դպրոց-ընտանիք կապն ընդգրկում է հարաբերությունների ավելի մեծ սպեկտր,քան ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունը:Այն վերնագրվում է նաև ուսումնադաստիարակչական կոլեկտիվ-ընտանիք,ինչպես նաև ծնող-սովորողներ առնչություններին ու հաղորդակցմանը:

Անձի անհատական զարգացման փուլերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհատը տարբեր տարիքային փուլերում տարբեր կերպով է ենթարկվում կողմնակի անձանց ու երևույթների ազդեցությանը:Այսպես՝ մինչև նախադպրոցական տարիքը երեխայի համար բացարձակ հեղինակություն են ծնողները, տատը, պապը կամ ընտանիքի այլ անդամներ,որոնք անմիջական ազդեցություն են ունենում երեխայի դաստիարակության վրա:

Հեղինակություն են դառնում սովորողի այն ընկերները, որոնք շրջապատում իրադրորեն ճանաչվում են որպես լիդերներ: Այս և նմանատիպ այլ յուրահատկություններ առավել նշանակալի են դարձնում կապերի ու հաղորդակցության դերը սովորողների կրթադաստիարակչական պրոցեսի համակողմանի,ներդաշնակ ու արդյունավետ իրականացման գործում:Շրջապատի բացասական ազդեցության դեպքում երեխայի վրա ծնողի կամ ուսուցչի ուղղակի ազդեցությունը երբեմն չի կարող ապահովել միևնույն ցանկալի արդյունքը, ինչ երեխայի վրա ներգործող շրջապատի կամ ծնողների հետ նրանց համապատասխանեցված հաղորդակցությունը:

Երեխայի համաժամանակյա,շարունակական ու ներդաշնակ զարգացման ու

դաստիարակության գործում վերոնշյալ կողմերի միջև համագործակցությունը փոխպայմանավորված է,ամբողջական և լրացնում է մեկը մյուսին:Նման հարաբերություններն ամրապնդվում են ինչպես ծնողական ժողովների,այնպես էլ էքսկուրսիաների, համատեղ միջոցառումների, ուսուցիչ-ծնող-աշակերտ ընդհանրական ու անհատական զրույցների և հաղորդակցության այլ մեթոդների միջոցով:Այս հարցում համակարգող դերը ստանձնում է ուսուցիչը՝ հաճախ կրելով նման հաղորդակցության հաճախականության ու ակտիվության կազմակերպչական պատասխանավություն: Սակայն մեծ է նաև ծնողի անհատական, մասնագիտական ու կազմակերպչական դերն ու նշանակությունը:

Վերոնշյալ կապի՝ մինչ այս գոյություն ունեցող մոդելները թեպետ պահպանում են իրենց կառուցողական նշանակությունը, սակայն հասարակական պատվերի լայնացող ասպեկտների շրջանակում առավել նպաստավոր կլինի նաև դրանց համալրումը և թարմացումը նոր մեթոդներով ու հնարքներով,որոնք դրականորեն կանդրադառնան սովորողների հասարակական ինտեգրման գործընթացի վրա:ՈՒստի դպրոց-ընտանիք կապն ու հարաբերությունը կրում է շարունակական բնույթ՝ համաքայլ շարժվելով հասարակության պահանջներին,նյութատեխնիկական բազայի զարգացմանն ու այլ փոփոխություններին:Դրա ապացույցն է այնպիսի հարթակի ստեղծումը,ինչպիսին է dasaran.am համացանցային կայքը, որի միջոցով ավելի հեշտ է կազմակերպվում ծնողի կողմից երեխայի առաջադիմության ստուգումը:

Դպրոցը՝ որպես կրթական առաջնային ու հիմնական հաստատություն, կրում է երեխայի կրթության ու դաստիարակչական գործընթացի կազմակերպման հիմնական պատասխանատվությունը:ՈՒստի սերունդների դաստիարակությունը, կրթությունն ու զարգացումը առավել համակողմանիորեն ու լիաժեք կազմակերպելու համար անհրաժեշտ է ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի, ծնողների, խնամակալների հետևողական աշխատանքի փոխհամաձայնեցումը:Հոգեպես,բարոյապես ու ֆիզիկապես առողջ սերունդն ամուր հասարակության կառուցման գրավականն է:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել և վերլուծել կրթական գործընթացում ուսուցիչ-ծնող-երեխա համագործակցության արդյունավետությունը:

Հետազոտական հարց

Ինչպե՞ս է ծնող–ուսուցիչ կապը նպաստում սովորողների կրթական առաջադիմությանը:

Հետազոտության խնդիրներ.

- Ուսումնասիրել ուսուցիչ-ծնող փոխհարաբերությունները ուսումնական գործընթացում:
- Ներկայացնել սովորողի և ծնողի իրավունքներն ու պարտականությունները**:**
- Մշակել ծնողների ներգրավման ռազմավարություն:
- Գնահատել ծնողների ներգրավվածության կարևորությունը կրթական պրոցեսում:

Թեմայի արդիականությունը.

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար:Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը,ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին,աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում, երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,աշակերտն ունենում է ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն,բարելավվում է նրա հաճախման ցուցանիշը,աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը,այնպես էլ դպրոցում:Սրանք այն շատ կարևոր գործոններն են,որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

ԳԼՈՒԽ 1
Ծնող-ուսուցիչ-երեխա փոխհարաբերություններում հաճախ հանդիպող դժվարությունները

«Մեր երեխաները մեր ծերությունն են:Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև»:

Ա. Ս. Մակարենկո

Արդի իրականության մեջ ծնող-երեխա փոխհարաբերությունների ուսումնասիրությունը շատ կարևոր է:Այլ ժամանակաշրջանում դաստիարակված և մանկությունը ապրած մեծահասակները դժվարությամբ են ընդունում և հարմարվում նոր սերունդների վարք ու բարքին,տեխնիկական առաջխաղացումներին և այլն,ինչի հետևանքով առաջանում են անհամաձայնություններ,բախումներ,կոնֆլիկտային իրավիճակներ և այլն:Վերոնշյալին ավելանում են նաև ծնողների և երեխաների ճգնաժամային դրսևորումները:«Լավ ծնողների մոտ մեծանում են լավ երեխաներ».բավականին հաճախ ենք օգտագործում այս արտահայտությունը՝ հաճախ դժվարանալով բացատրել,թե ինչ է նշանակում լինել «լավ ծնող»:Շատերը կարծում են,որ «լավ ծնող» կարելի է դառնալ՝ ուսումնասիրելով մասնագիտական գրականություն կամ տիրապետելով հատուկ մեթոդների: Ծնողավարության ընթացքում,ինչպես և այլ գործընթացներում,դժվար է զերծ մնալ սխալներից, սակայն մեկ այլ ծայրահեղության դեպքում,եթե ծնողը փորձում է անթերի իրականացնել ծնողական խնամքն ու պարտականությունները,կարող է խոչընդոտել երեխայի ինքնուրույն արարելու, փնտրելու,գտնելու և որոշում կայացնելու ունակության ձևավորմանը:Ընտանեկան փոխհարաբերություններում մեծ նշանակություն ունի նաև սիրո պահանջմունքի բավարարումը:Ծնողական սերը իր երեխայի նկատմամբ անսահման է և առանց պայմանի. այն երեխայի հոգևոր և մարմնական առողջության հիմքն է:

Ծնողների և երեխաների ընդհանրումների պատճառը հաճախ երեխաների ինքնուրույնության և անկախության ձգտումն է:Սակայն այս ինքնուրույնության հետ համատեղ երեխանները շարունակում են հուզականորեն սերտ կապի մեջ մնալ ծնողի հետ:

Առավել խնդրահարույց իրավիճակում են հայտնվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողները, քանի որ նրանց մոտ հավելյալ ծագում են նաև երեխայի առանձնահատկություններով պայմանավորված դժվարություններ՝ երեխայի խնդրի ընդունում,բացասական հուզական ապրումների հաղթահարում,նրա խնդրին համապատասխան աջակցության ցուցաբերում և

այլն:Ծնող-երեխա փոխհարաբերությունների վատթարացմանը նպաստում նե նաև շրջապատի կողմից չիմացության հետևանքով երեխայի խնդրին դրվող ոչ համարժեք արձագանքը,ծաղրանքը, երեխայի վարքային դրսևորումների բացասական մեկնաբանությունները և այլն:
Երեխայի լիարժեք զարգացումը առաջին հերթին իրականանում է բարենպաստ և ներդաշնակ ընտանեկան միջավայրում:Իսկ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար այդ ներդաշնակ պայմաններն էլ ավելի են կարևորվում, քանի որ նրանք զերզգայուն են, նրբանկատ և հուզական:
Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից,ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը,որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում:
Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր,որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնող-ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության,արժեհամակարգի ձևավորման,հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար:Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է՝

- ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ,
- կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ,
- հրավիրի ընտանիքներին իրենց մասնակցությունը բերելու ծրագրին,
- ընդլայնի աջակցությունը ընտանիքներին `տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով,
- աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում:

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները:Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը

ներգրավված է ուսումնական գործընթացին:
Ծնողն առաջին անգամ դիմում է մասնագետի օգնությանը, երբ երեխայի մոտ նկատում է անցանկալի հուզվածքային դրսևորումներ և ոչ այնքան կառուցողական շփում:Հաճախ նա երեխային դիտարկում է որպես առանձին միկրոաշխարհ, որն ասես անջատ է ընտանիքից, նրա անդամներից և ծնողներից:Տպավորություն է ստեղծվում, որ ծնողների վարքը, հուզական վիճակը, ընտանեկան մթնոլորտը փոխկապված չեն երեխայի հոգեբանական դժվարությունների հետ:Արհեստավարժ հոգեբանը երեխայի խնդիրների հաղթահարման գործում աստիճանաբար ներգրավում է ծնողներին՝ նպաստելով ծնող-երեխա համակարգում ծնողի դերի գիտակցմանն ու արժևորմանը:Իհարկե, ծնողներին պետք հասցեագրել, որ նրանց մասնակցությունն անհրաժեշտ է ոչ թե այն պատճառով, որ նրանց մեղավորությամբ է երեխան հայտնվել նման իրավիճակում, այլ բացատրելով, որ ծնողը կազմում է երեխայի անբաժանելի մասը, և նրանից լավ ոչ ոք չի կարող հասկանալ և զգալ երեխայի ապրումները:
Առաջին հանդիպման ընթացքում շատ կարևոր է ստեղծել ջերմ, փոխվստահության մթնոլորտ:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող աշխատանքները տարբերվում են ինքնատիպությամբ,քանի որ այդ ծնողներին բնորոշ է հուզական լարվածությունը, երեխայի խնդիրը ընդունելու և իրավիճակի հետ հարմարվելու ակնհայտ դժվարությունները:Ծնողներն իրենց զգում են փակուղում, անելանելի իրավիճակում.նրանց անդադար տանջում է այն միտքը, որ իրենք ոչինչ չեն կարող փոխել, որ իրենց երեխան դատապարտված է «հիվանդ երեխա» կոչվելու դատավճռին: Ուստի հաճախ ծնողը հերքում է խնդրի առկայությունը,հրաժարվում է ընդունել այն, հետաձգում է երեխային աջակցելու գործընթացն այնքան ժամանակ,մինչ կրկին կհայտնվի այդ խնդիրը հրահրող իրավիճակում:Կրթական համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:Իսկ ծնողները,առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը,պետք է մշտապես համագործակցեն դպրոցի մանկավարժական աշխատողների հետ:
Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը:Անկախ ընտանիքի սոցիալ-

տնտեսական կարգավիճակից,ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով:Այն սովորողները,ում ծնողներն ավելի բաց են համագործակցության համար,հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ,ավելի են մոտիվացվում:Արդյունքում նրանք դառնում են ավելի պատասխանատու,բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ:Անշուշտ,ծնողների նեոգրավվածությունը դպրոցի,դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է վերջիններիս հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր:

ԳԼՈՒԽ 2

Սովորողի և ծնողի իրավունքներն ու պարտականությունները

«Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա»:

Սուխումլինսկին

Յուրաքանչյուր ծնող ունի ինչպես որոշակի իրավունքներ իր երեխայի նկատմամբ, այնպես էլ նրան դաստիարակելու և կրթության տալու պարտականություններ:

Ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակելու իրենց երեխաներին:

Նրանք պատասխանատվություն են կրում իրենց երեխաների դաստիարակության և զարգացման համար:Նրանք պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների առողջության, ֆիզիկական,հոգեկան, հոգևոր և բարոյական զարգացման մասին: Ծնողները բոլոր այլ անձանց հանդեպ ունեն իրենց երեխաներին դաստիարակելու նախապատվության իրավունք:

Նրանք պարտավոր են ապահովել երեխաների կրթություն ստանալը:Ծնողները, երեխաների կարծիքը հաշվի առնելով հանդերձ, ունեն կրթական հաստատության և երեխաների ուսուցման ձևի ընտրության իրավունք մինչև երեխաների հիմնական ընդհանուր կրթություն ստանալը:Ինչպես ծնողներն ունեն դաստիարակելու և կրթություն տալու պարտակություններ և իրավունքներ, այնպես էլ համաձայն ընտանեկան օրենսգրքի՝ ծնողի իրավունքների և պարտականությունների մեջ է մտնում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Ծնողները համարվում են իրենց երեխաների օրինական ներկայացուցիչները և նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ առանց լիազորագրի հանդես են գալիս ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ ցանկացած հարաբերություններում, ինչպես նաև դատարանում:

1. Սովորողի ծնողն իրավունք ունի՝

1) երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը,

2)համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով,
2.1) մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանն ու իրականացմանը,
2.2) ստանալու անհրաժեշտ խորհրդատվություն երեխայի կրթության կազմակերպման աջակցության ծառայությունների վերաբերյալ,
3)դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով,
4) պաշտպանելու իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում,
5) մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին,
6) մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը,
7) մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:Սովորողի ծնողն ունի նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

2.Սովորողի ծնողը պարտավոր է՝
1)երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար,
2)մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար,
3)հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ,
4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ,
5)դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ.
6)սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն,
7)հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը,
8)սովորողին զերծ պահել ծխախոտ,ոգելից խմիչքներ,հոգեմետ նյութեր,զենք,զինամթերք, թունավոր,պայթուցիկ,ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

Սովորողի իրավունքներն ու պարտականությունները
Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ եւ
պարտականություններ:Դրանք սահմանվում են օրենքով եւ ուսումնական
հաստատության կանոնադրությամբ:

Սովորողն իրավունք ունի՝
1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին

համապատասխան կրթություն,
2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը եւ ուսուցման ձեւը, ինչպես նաեւ տվյալ ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ,
3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.
3.1) ստանալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը բավարարելուն ուղղված աջակցություն,
4) մասնակցելու ներդպրոցական եւ արտադպրոցական միջոցառումների,
5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական եւ այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը,
6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը,
7) ազատորեն փնտրելու եւ մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները,
9) օգտվելու օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

Սովորողը պարտավոր է՝
1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել եւ տիրապետել համապատասխան հմտությունների եւ կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.
3) հաճախել եւ մասնակցել ուսումնական պարապմունքներին.
4) կատարել օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

Սովորողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը
1. Ուսումնական հաստատությունում կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ եւ ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:
2. Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ
ոչ պատշաճ կատարելու դեպքերում սույն օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով միջին եւ ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետեւյալ կարգապահական տույժերը.
1) նկատողություն.
2) խիստ նկատողություն:
3. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը կարգապահական նոր խախտում թույլ չի տվել եւ դրսեւորել է իրեն որպես բարեխիղճ,
օրինակելի, կարգապահ սովորող:
4. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը մեկ

ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում ուսումնական հաստատությունը կարող է՝
1) առաջարկել ծնողին սովորողին տեղափոխել այլ ուսումնական հաստատություն.
2) դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմնին՝ երեխային սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու առաջարկով:

Գլուխ 3
Ծնողների ներգրավվածության նշանակությունը

«Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ»:

Վ. Դ. Սեմյոնով

«Յուրաքանչյուր ծնող նախ անձ է, որն ունի բազում հետաքրքրություններ և ցանկություններ, արժեքներ և դիրքորոշումներ, ուժեղ և թույլ կողմեր, որոնց շնորհիվ էլ նա անհատականություն է՝ ինքնատիպ ու յուրօրինակ:Նախորդ նյութերում շեշտը դրվեց ծնող-երեխա փոխհարաբերությունների հատկապես դրանց թերացումների ու դժվարությունների վրա, սակայն յուրաքանչյուր ոք երջանիկ է ու բավարարված, երբ ինքնահիրացված է իր կողմից ծավալած գրեթե բոլոր փոխհարաբերություններում՝ կին-ամուսին, կին-երեխա-ամուսին, կին-աշխատանքային գործունեություն և այլն, ունի անձնական ժամանակ՝ խորհելու, լիցքաթափվելու, կյանքի իմաստն արժևորելու համար:Ոէստի կարևոր է, որ մասնագետը ծնող-երեխա փոխհարաբերությունները կարգավորելուն զուգընթաց նպաստի յուրաքանչյուր ծնողի անհատականության գիտակցմանը,ապահովի անձնային աճն ու ինքնահիրացումը, քանզի բազմաթիվ դիտարկումների արդյունքում ակնհայտ է դարձել,որ «արդյունավետ» ծնողը նա է, ով համեմատաբար կայացած է կյանքի գրեթե բոլոր հիմնական ոլորտներում, ով ժամանակ առ ժամանակ լիցքաթափվում է,ով մասնագիտության մեջ աճ է գրանցում,ով հաջողում է ծնող-երեխա փոխհարաբերություններում և այլն:Մասնագետի նմանատիպ դիրքորոշումը մասնագետ-ծնող փոխհարաբերությունների համատեքստում բերում է մասնագետի նկատմամբ «մասնագիտական համակրանքի» և վստահության ձևավորմանը,ինչպես նաև նպաստում համագործակցային հարաբերությունների հիմնմանը՝ ի շահ երեխայի , հօգուտ երեխայի»:
Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը ատանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար:Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը,ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին,աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է

գործում:Հետազոտումների համաձայն աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթության գործընթացին,ավելի լավ արդյունքների են հասնում. ստանում են ավելի լավ գնահատականներ,ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի լավ որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբուր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:
Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա:Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:
Ծնողների ակտիվ ներգրավվումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա:
Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության մեջ,աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում,չնայած այն բանին, թե ինչպիսին է ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով,դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորութոյլնների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

ի՞նչ ճանապարհներով կարելի է լուծել ծնողների ներգրավման հիմնախնդիրները:

Առաջարկում ենք ծնողների ներգրավվածության ոլորտում եղած հիմնխնդիրների լուծման երեք ճանապարհ.
1) հաղորդակցման բարելավում.
2) ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացում.
3) անհատականացում.

1.Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է:Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն:
Հաղորդակցումը բարելավելու նպատակով,կարելի է առաջարկել հետևյալ ակտիվությունները.

Հանդիպե՛ք և ջերմորեն ընդունեք ծնողին :
Նպաստե՛ք դպրոցում ծնողների համար ջերմ և կառուցողական միջավայրի ստեղծմանը. դրա համար կարևոր է դպրոցի աշխատակիցների համապատասխան վերաբերմունքը ծնողների հանդեպ: Ծնողների հետ ճիշտ ձևով հանդիպումը և ջերմ ողջունումը կարևոր է:Ծնողի հետ խոսելիս դպրոցի ներկայացուցիչները պետք է լինեն բաց և դրականորեն տրամադրված: Դպրոցում հիմնավորված հանդիպման և ողջույնի կուլտուրան նպաստում է ծնողների և դպրոցի միջև միասնության ուժեղացմանը,ծնողին օգնում է այն բանի գիտակցմանը, որ նրանք դպրոցական հասարակության լիիրավ և գնահատված անդամներ են: Դպրոցում եղած ողջույնի և հանդիպման կուլտուրայով ծնողի մոտ առաջանում է սկզբնական տպավորությունը դպրոցի մասին.եթե այդ տպավորությունը դրական է,եթե նրանք անկաշկանդ են զգում իրենց դպրոցական միջավայրում,ուրեմն ապագայում դպրոցի նկատմամբ բարյացակամ և հավատով լեցուն վերաբերմունք կունենան:Բնական է, այստեղ նկատի է առնված ոչ միայն հաճելի ֆիզիկական արտաքինը, այսինքն ոչ միայն արտաքին տպավորությունը,այլ նաև այն, թե ինչպես հյուրընկալեց ծնողին դպրոցական հասարակությունը, ինչպիսի դպրոցական մթնոլորտ է հանդիպում նրան:

Խրախուսե՛ք կամավոր ծնողներին
Ցուցաբերե՛ք հարգանք և արժևորում դպրոցի կյանքին կամավոր ներգրավված ծնողների նկատմամբ.
- Նշե՛ք ծնողների դերը դպրոցի հաջողության հարցում: Ուղարկե՛ք շնորհակալագրեր կամ ընդգծե՛ք նրանց վաստակը դպրոցի այլևայլ հանդիպումներին,միջոցառումներին.
- Պլանավորե՛ք ամենամյա հանդիպումներ, պաշտոնական ճաշեր, թե շնորհանդեսներ, որտեղ կքննարկվեն ծնողների հաջողությունները.
- Ակտիվ կամավոր ծնողին կամ ծնողներին հանձնեք նվեր կամ «Ամենաակտիվ ծնողին»՝ վկայական,դիպլոմ.

Ծնողներին բաժանե՛ք հարցաշարը՝ երեխայի և ընտանիքի մասին տեղեկություն ստանալու նպատակով
Ուսումը սկսվելուց երկու կամ երեք շաբաթից հետո ուսուցիչը կարող է ծնողի տուն ուղարկել հարցաշարը, որը պարունակում է այսպիսի հարցեր. Ինչպիսի՞ն էր Ձեր որդին ավելի վաղ հասակում:Որո՞նք են Ձեր երեխայի թույլ և ուժեղ կողմերը:Ի՞նչ է անում Ձեր երեխան ազատ ժամանակ:Այս տեղեկատվությունը ուսուցչին կօգնի ճանաչել ամեն մի աշակերտին, որպես անձնավորություն և որպես աշակերտ:Կարևոր է, որ ուսուցիչն իմանա,թե ինչպես են ծնողները

ստուգում/հսկում երեխաներին և նրանց ուսման գործընթացը:Չնայած այն բանին, որ հնարավոր է ծնողները ևս զբաղված լինեն, ինչպես ուսուցիչները,բայց և այնպես նրանք,հավանաբար,մեծ հաճույքով ժամանակ կտրամադրեն իրենց երեխայի մասին տեղեկությունների հաղորդմանը:Հարցաշարի օգնությամբ ծնողը հնարավոր է դպրոցին հաղորդի իր ընտանեկան ավանդույթների և արժեքների մասին,նաև ընտանիքում եղած հիմնախնդիրների մասին (հիվանդություն,տարիքավոր ծնողներ, ֆինանսական հիմնխնդիրներ և այլն):

Պլանավորե՛ք բաց դռների օր / ծնողի օր

Ուսուցիչը/դասղեկը հնարավոր է նշանակի մեկ օր (շաբաթվա կամ ամսվա մեջ), որի ընթացքում բոլոր ծնողներին հնարավորություն կտրվի օրվա ցանկացած պահին գալ դպրոց և զրուցել դասղեկի հետ,հանդիպել առարկայական ուսուցիչներին և ստանալ մանրամասն տեղեկություն երեխայի մասին:

Գնահատե'ք ծնողների հետ հանդիպման արդյունավետությունը

Ցանկալի է պարզ գնահատմնան ձևի պատրաստում ծնողի կողմից յուրաքանչյուր հանդիպման, միջոցառման գնահատման համար:

Տարածե'ք «դրական տեղեկությունները» ծնողների համար

Պարբերաբար ծնողներին հաղորդե՛ք լավ լուրեր:

Ուսուցիչները պետք է սովորություն դաստիարակեն, որ աշակերտին գովելու համար հեռախոսով կապնվեն ծնողին, կամ էլեկտրոնային փոստով գրեն նամակ:Երբեմն աշխատանքը կատարած աշակերտները չեն ստանում համապատասխան գովեստ: Ծնողները մնում են գոհ, հաճախ էլ զարմացած, երբ ուսուցիչը զանգում ու գովում է իրենց երեխային:

2. Ծնողների և դպրոցի անձնակազմի տեղեկացման բարձրացման համար միմյանց հետ արդյունավետ համագործակցության թեմայով առաջարկած է հետևյալ ակտիվությունները՝

Առաջարկե՛ք ուսուցիչներին վարժանքներ

Ուսուցիչների համար պարբերաբար պետք է անցկացնեն վարժանքներ այն թեմայով, թե ինչպես պետք է ստեղծեն բարիդրացիական միջավայր,ինչպես հաստատեն ճիշտ հաղորդակցում ծնողների հետ,ինչպես դառնան ծնողների հետ կապ հաստատելու նախաձեռնողներ և այլ հարցերի մասին,որի ապահովումը կարևոր է և պարտավորում է ուսուցչին:

Եղե՛ք նախաձեռնող ծնողների հետ կապ հաստատելիս

Որոշ ծնողներ համոզված են, որ ունեն որոշակի որակավորում և կրթություն, ինչը պետք կգա աշակերտի հետ աշխատելիս,թեև չգիտեն՝ ինչպես օգտագործել սեփական հնարավորությունները:Մի՛ սպասեք ծնողից օգնության առաջարկի:Անձամբ խնդրե՛ք նրանց օգնել աշակերտի հետ աշխատանքում:Կազմեք ծնողների գործունեության ցուցակ և դրանց որակավորման նկարագիրը:Անցկացրե՛ք ծնողների հարցում կամ հանդիպում, որտեղ կորոշեք,թե ինչ տեսակի օգնության կարիք ունեն ծնողները աշակերտին աջակցելու նպատակով ուսումնական գործընթացին արդյունավետ ընդգրկվելու հարցում:

Ծնողին հաղորդեցե՛ք տեղեկություն

Ծնողին հաղորդեցե՛ք մանրամասն տեղեկություն, ինչպես դպրոցում արդեն իրականացրած միջոցառումների և աշխատանքների,այնպես էլ ապագայում ծրագրած ակտիվությունների մասին:Ծնողներին հաղորդե՛ք նաև տեղեկություն՝

- Տարեկան գործողությունների ծրագրի մասին,

- Ուսումնական ծրագրերի բովանդակության մասին,
- Գնահատման արարողությունների և չափանիշների մասին,
- Աշակերտներին սպասարկող ծրագրերի մասին,
- Դպրոցի գլխավոր սկզբունքների մասին,
- Թե ինչպես կարելի է երեխաներին օգնել տանն աշխատելու ժամանակ,
- Առարկայական թեստերի պարզ նմուշների տեսքով, եթե դա հնարավոր է :

Ծնողներին տվե՛ք նյութեր

Դպրոցը (ուսուցիչները) ծնողին պետք է հաղորդի բազմազան տեղեկատվական բնույթի նյութ, որը կապված կլինի երեխայի զարգացման, առողջության և անվտանգության հետ: Կարևոր է, որ ծնողները իրազեկված լինեն հատուկ կրթության, սոցիալական ծառայության գործակալության մասին տեղեկություններին:Հնարավոր է՝ դպրոցը ծնողին տա ձեռնարկ, երաշխավորագրեր՝ գրավոր տեսքով, տեսաձայնագրային նյութ, համապատասխան կայք-էջի հասցեներ և այլն:

3.Անձնավորում

Ստեղծեցե՛ք կայք-էջ

Ցանկալի է ուսուցիչների, դասվարների օգնությամբ ստեղծել աշակերտների բլոգներ, որոնք հասանելի կլինեն ծնողների համար:Եթե դպրոցը միջոցներ չունի կայք-էջ ստեղծելու, ապա կարող են ուսուցիչները սոցիալական էջերում, օր.՝ Facebook-ում, ստեղծել էջ: Դպրոցի էջում տեղակայված նյութը կլինի այն նյութերի նման, ինչը կտեղակայվի կայք էջում:

Ծնողին ուղարկե՛ք նամակ կամ E-mail- (նամակ՝ էլեկտրոնային տեսքով)

Կան ծնողներ, ովքեր հնարավորություն չունեն հաճախ այցելելու դպրոց:Եթե ծնողը դպրոց չի կարող գնալ, ուսուցիչը պետք է նամակ գրի նրան, որը ծնողին իր երեխայի մասին կհաղորդի անհատական տեղեկություն:Օրինակ՝ տեղեկությունը կարող է վերաբերվել երեխայի անհատական առաջընթացին,ինչի՞ է հասել, ինչի՞ն չի կարող հասնել և ինչու՞, ի՞նչ կարող են անել ուսուցիչները և ծնողները փոխադարձ համագործակցությամբ ՝աշակերտին ուժեղացնելու համար:Ուսուցիչները նաև պետք է մշակեն խորհուրդ,ուղարկեն ծնողին նամակ:Շատ ժամանակ է տրվում աշակերտներին,որոնք տարբերվում են ցածր ակադեմիական նվաճումներով կամ վատ վարքով և չեն հնազանդվում ուսուցչի ցուցումներին:Իսկ այն աշակերտները,ովքեր լավ են սովորում կամ լավ վարք ունեն, չեն ստանում վաստակած գովասանքը:Ծնողների երջանկությունը սահման չունի,երբ ուսուցիչն ուղարկում է նրան տեղեկություն՝ երեխայի հաջողության մասին:

Հանդիպե'ք ծնողներին

Հանդիպումները պետք է վերաբերվեն տարբեր թեմաներին և պետք է անցկացվի երկխոսության ձևով:Հանդիպումը պետք է լինի կառուցողական և ծառայի տեղեկատվության և գաղափարների փոխադարձ իրազեկությանը:Չպետք է ունենա դասախոսության տեսք: Նաև նախատեսված պետք է լինի հանդիպումների տեղը և մասնակիցների հարմար տեղավորումը:Ցանկալի է,որ հանդիպումները անցկացվեն տարբեր ժամանակ,որպեսզի բոլոր ծնողներին ներկա գտնվելու հնարավորություն տրվի: Ուսուցիչը/դասղեկը պետք է կազմակերպի ծնողների հանդիպումը տնօրենի հետ, ով նրանց կծանոթացնի ընթացիկ և պլանավորված միջոցառումներին/նախագծերին, որտեղ կարևորը ծնողների ներգրավումը կլինի:

Հիմնադրե'ք ծնողական ակումբներ,՝ լսե'ք ծնողներին

Ցանկալի է ստեղծել ծնողական ակումբ:Ավելի լավ է,ակումբները կոմպլեկտավորվեն տարբեր սեռերի,հասակի, մասնագիտության թե էթնիկական ծագման համաձայն: Նշանակալից է հատուկ կարիքներ ունեցող ծնողների ներգրավումը (դրանց գոյության դեպքում) և նրանց կարծիքի հաշվի առնելը:Ծնողական ակումբը կհավաքվի հաստատված ժամկետներով,կարծիքներ կփոխանակվեն դպրոցի մասին,եղած հիմնախնդիրների մասին, կմշակվեն հետաքրքիր նախագծեր, կանցկացվեն միջոցառումներ:Հնարավոր է ակումբներ հրավիրեն հոգեբաններին,հանդիպեն փորձագետներին՝ խորհրդատվություն ստանալու նպատակով և այլն:Ծնողները կարող են բազմաթիվ ուղղություններով ներգրավվեն խորհրդատվությունների անցկացման և որոշումների ընդունման գործընթացներում:

•Ակումբի անդամները կարող են պարբերաբար մասնակցել հանդիպումներին, արտահայտել սեփական տեսակետները դպրոցի ներկայացուցիչներին՝ դպրոցի հետ կապված հարցերի շուրջ և մասնակցեն որոշումներ կայացնելու գործընթացին.

• Ծնողական ակումբի անդամ ծնողները կարող են տեղեկություն հաղորդել դպրոցի մնացած ծնողներին այն կոնկրետ հարցերի, թե օրենքների մասին, որոնք ազդեցություն կունենան իրենց երեխաների վրա.

Իմ փորձառությունը

Հետազոտական աշխատանքի հենց սկզբից ուսումնասիրել և անցկացրել եմ սոցոլոգիական հարցում ծնողների հետ, պարզելու համար իրենց կարծիքն իմ մասին,փորձելու հասկանալ,թե որքանով եմ ընդունելի իրենց համար:Սա կօգնի ինձ բացահայտելու իմ դրական կողմերն ու բարելավման ուղղությունները:Վերլուծելով և ի մի բերելով արդյունքները՝ հետագա աշխատանքները կփորձեմ ավելի ճիշտ և արդյունավետ կազմակերպել:Ստորև ներկայացնում եմ հարցաթերթիկի ձևանմուշը.

Հարցաթերթիկ ծնողների համար

Հարգելի՛ ծնող
Խնդրում ենք ծանոթանալ ստորև ներկայացված հարցերին և պատասխանել «այո» կամ «ոչ՝ Ձեր կարծիքը հայտնելով ուսուցչի մասին:
ՈՒսուցչի անուն, ազգանունը……

1	Նա արդար է՝ աշակերտներին գնահատելիս:	այո	ոչ
2	ՈՒշադիր է աշակերտների հանդեպ:	այո	ոչ
3	Երեխան դժկամությամբ է հաճախում նրա դասերին:	այո	ոչ
4	Հաճախ խորհրդակցում եմ նրա հետ՝ երեխայիս դաստիարակության հարցերով:	այո	ոչ
5	Երեխաս նրա հանձնարարությունները կարողանում է ինքնուրույն կատարել:	այո	ոչ
6	Երեխաներից հաճախ եմ նրա հասցեին դժգոհություններ լսել:	այո	ոչ
7	Երեխաները միշտ հարգանքով են արտահայտվում նրա մասին:	այո	ոչ
8	Նա դպրոցի լավագույն ուսուցիչներից է:	այո	ոչ
9	Աշակերտների հանդեպ նրա վերաբերմունքը պայմանավորված է նրանով, թե ովքեր են ծնողները:	այո	ոչ
10	Իր առարկային գերազանց է տիրապետում:	այո	ոչ
11	Կարողանում է ակտիվ ներգրավել ծնողներին:	այո	ոչ
12	Երեխաս աշխատում է նրա դասերից չբացակայել:	այո	ոչ
13	Հարգված է ծնողների կողմից:	այո	ոչ
14	Չի հարգում աշակերտների անհատականությունը, կոպիտ է:	այո	ոչ
15	Կգերադասեի, որ երեխայիս մեկ ուրիշը դասավանդեր:	այո	ոչ

16	Նրա հետ զրուցելը հաճելի է:	այո	ոչ
17	Վստահ եմ, որ երեխայիս կայուն և խոր գիտելիքներ է տալիս:	այո	ոչ
18	Երեխաները հարգում և օրինակ են վերցնում նրանից:	այո	ոչ
19	Հաճախ է բաց թողնում դասերը:	այո	ոչ
20	Երեխաները վստահում են նրան:	այո	ոչ
21	Պատրաստ եմ համագործակցել նրա հետ՝ երեխայիս կրթության հարցում:	այո	ոչ

Վերլուծելով վերը նշված հարցաթերթիկը , որին լրացրել են 5-րդ և 6-րդ դասարանների 10 ծնողներ, ունենք հետևյալ արդյունքները՝

Հարց 1. Նա արդար է՝ աշակերտներին գնահատելիս:

Այո- 90% Ոչ-10%

Հարց 2. ՈՒշադիր է աշակերտների հանդեպ:

Այո-90% Ոչ-10%

Հարց 3. Երեխան դժկամությամբ է հաճախում նրա դասերին:

Այո-5% Ոչ-95%

Հարց 4. Հաճախ խորհրդակցում եմ նրա հետ՝ երեխայիս դաստիարակության հարցերով:

Այո-80% Ոչ-20%

Հարց 5. Երեխաս նրա հանձնարարությունները կարողանում է ինքնուրույն կատարել:

Այո-97% Ոչ-3%

Հարց 6. Երեխաներից հաճախ եմ նրա հասցեին դժգոհություններ լսել:

Այո-3% Ոչ-97%

Հարց 7. Երեխաները միշտ հարգանքով են արտահայտվում նրա մասին:

Այո-100% Ոչ- 0%

Հարց 8. Նա դպրոցի լավագույն ուսուցիչներից է:

Այո-95% Ոչ-5%

Հարց 9. Աշակերտների հանդեպ նրա վերաբերմունքը պայմանավորված է նրանով, թե ովքեր են ծնողները:

Այո-1% Ոչ-99%

Հարց 10. Իր առարկային գերազանց է տիրապետում:
Այո-98% Ոչ-2%

Հարց 11. Կարողանում է ակտիվ ներգրավել ծնողներին:

Այո-95% Ոչ-5%

Հարց 12. Երեխաս աշխատում է նրա դասերից չբացակայել:

Այո-3% Ոչ-97%

Հարց 13. Հարգված է ծնողների կողմից:

Այո-98% Ոչ-2%

Հարց 14. Չի հարգում աշակերտների անհատականությունը, կոպիտ է:

Այո-2% Ոչ-98%

Հարց 15. Կգերադասեի, որ երեխայիս մեկ ուրիշը դասավանդեր:

Այո-2% Ոչ-98%

Հարց 16. Նրա հետ զրուցելը հաճելի է:

Այո-99% Ոչ-1%

Հարց 17. Վստահ եմ, որ երեխայիս կայուն և խոր գիտելիքներ է տալիս:

Այո-95% Ոչ-5%

Հարց 18. Երեխաները հարգում և օրինակ են վերցնում նրանից:

Այո-98% Ոչ-2%

Հարց 19. Հաճախ է բաց թողնում դասերը:

Այո-0% Ոչ-100%

Հարց 20. Երեխաները վստահում են նրան:

Այո-98% Ոչ-2%

Հարց 21. Պատրաստ եմ համագործակցել նրա հետ՝ երեխայիս կրթության հարցում:

Այո-97% Ոչ-3%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի,սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է:Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:

Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել,որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:

Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:

Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին:Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է,որ կիսվի ծնողների հետ:

Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը,որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը:

Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ,որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը, և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:Պետք է կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ, նաև աշխարհի ապագա պատմությունը:

Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ:Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը:Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում:Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում. նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը:Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ:Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար,ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

Այսպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից, վերանայելով արդյունքները,կատարեցինք հետևյալ դիտարկումները.

- Համագործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա:
- Ուսուցչի,սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է:Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: .
- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:
- Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել,որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրնրն ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:
- Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:
- Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ:
- Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը:
- Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ,որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց երեխային, և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

  Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ:Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք:Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը:Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը:Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում:Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում.նրանք են կրում դրա զարգացման հիմնական պատասխանատվությունը:Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ:Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց – ընտանիք համագործակցությունը:

Գրականության ցանկ

1. Ռուզաննա Մուրադյան, « Դասղեկ», Երևան- 2007
2. Մելանյա Դավթյան, «Դաստիարակչական աշխատանքը դպրոցում», Երևան-2007
3. Սիրանուշ Անտոնյան, Նինա Մովսիսյան, Լիլիթ Թովմասյան, «Ծնողավարության ձեռնարկ հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների հետ աշխատանքների համար», Երևան,98էջ
4. «Ծնողների ներգրավվածությունը», Թբիլիսի-2015
5. https://docs.google.com/document/d/1g_rCf8KuZAQRoLIfdyhlFLIbrbAnqAaCpbm_N49YYZ4/edit?fbclid=IwAR2Jaw6mSxv6Kq0RIU0hYcKSIt6FP1tu6Tes4regdO4PqP4DJiLmXOCspnE
6. https://docs.google.com/presentation/d/1VQYRzLtXWfoMasesaVMivPxNoT7zemtRtD6aDDvYI6Y/edit?fbclid=IwAR2oxzcJqRfXjXAaUg9K1yHzFBOZQ7oHWqT_whVOywNfTVfr9raBKisGvzk#slide=id.p39
7. https://docs.google.com/document/d/1SeuU5oTaprO6zEKzV_P9hBSd6hTVeRbs_GB8VPne10o/edit?fbclid=IwAR0ISwNtcfZBGN0nRYqRf5xbw-NTxJpnRFBmarIq5YWkQmxJKbn--f-C9IY